# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«16» Յուլիսի 2023 թվականի N 655 Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀԵՆՐԻԿԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Տ.ՃԱՐՏԱՐԱՊԵՏԻ ՓՈՂՈՑ 17 ՇԵՆՔ 28 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ՝ ՀԵՆՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆՆԵՐԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի փետրվարի 27-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Հարություն Հենրիկի Դարբինյանը (անձնագիր՝ 39 15 206664, տրված՝ 16.03.2017 թվականին 340-006 ստորաբաժանման կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխաների՝ 23.04.2006 թվականին ծնված Հենրիկ Հարությունի Դարբինյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №099769) և 07.06.2008 թվականին ծնված Հովհաննես Հարությունի Դարբինյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №260218) Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետի փողոց 17 շենք 28 բնակարանի մասնաբաժինները:

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատերեր են հանդիսանում նաև անչափահասներ՝ Հենրիկ Հարությունի Դարբինյանը և Հովհաննես Հարությունի Դարբինյանը (հիմք՝ 15.10.2019 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 15102019-08-0017):

Նիստին ներկա գտնվող երեխաների հայրը՝ Հարություն Հենրիկի Դարբինյանը հայտնեց, որ իր ընտանիքին է պատկանում նաև Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոց 4-րդ նրբանցք 39 բնակելի տունը, որտեղ և ներկա պահին բնակվում են (հիմք՝ 29.01.2020 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 29012020-08-0017), (հիմք՝ տեղեկանք N.386 տրված՝ 27.02.2023 թվականին «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի կողմից):

Նիստին ներկա գտնվող անչափահասներ՝ Հենրիկ Հարությունի Դարբինյանը և Հովհաննես Հարությունի Դարբինյանը հայտնեցին, որ համաձայն են վաճառելու բնակարանի իրենց մասնաբաժինները:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Հարություն Հենրիկի Դարբինյանի 2023 թվականի փետրվարի 27-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 3146 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության

հանձնաժողովի 2023 թվականի մարտի 15-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Համաձայնություն տալ Հարություն Հենրիկի Դարբինյանին (անձնագիր՝ 39 15 206664) վաճառելու իր անչափահաս երեխաների՝ 23.04.2006 թվականին ծնված Հենրիկ Հարությունի Դարբինյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №099769) և 07.06.2008 թվականին ծնված Հովհաննես Հարությունի Դարբինյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №260218) Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետի փողոց 17 շենք 28 բնակարանի մասնաբաժինները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հարություն Հենրիկի Դարբինյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

16.03.2023

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«16» Հունիսի 2023 թվականի N 654-Ա

# ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍԱՄՎԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԻՐ ՈՐԴՈՒ՝ ԳՈՌ ԳԱՐԻԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի փետրվարի 10-ին՝ Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել Գյումրի քաղաքի Հնոցավան 1 շարք 55 տան բնակիչ՝ Արմենուհի Սամվելի Գրիգորյանը (նույնականացման քարտ՝ 006283493) խնդրելով իրեն նշանակել խնամակալ իր անգործունակ ճանաչված որդու՝ 22.10.2003 թվականին ծնված Գոռ Գարիկի Գրիգորյանի (նույնականացման քարտ՝ 013079181) նկատմամբ:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 20.10.2022 թվականի թիվ ՇԴ/0429/02/22 վճռով Գոռ Գարիկի Գրիգորյանը ճանաչվել է անգործունակ:

«Գյումրու Հոգեկան Առողջության Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 08.02.2023 թվականին տրված տեղեկությունների համաձայն դիմումատուն՝ Արմենուհի Սամվելի Գրիգորյանը Գյումրու նյարդահոգեբուժական և նարկոլոգիական դիսպանսերներում հաշվառման մեջ չի գտնվում (տեղեկանքները կցվում են):

«Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքի համաձայն Արմենուհի Սամվելի Գրիգորյանը իր որդու՝ Գոռ Գարիկի Գրիգորյանի հետ բնակվում են Գյումրի քաղաքի Հնոցավան 1 շարք 55 տանը (հիմք՝ տեղեկանք, N.277 տրված՝ 08.02.2023 թվականին):

Ելնելով անգործունակ ճանաչված Գոռ Գարիկի Գրիգորյանի շահից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Արմենուհի Սամվելի Գրիգորյանի 2023 թվականի փետրվարի 10-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 2060 թվագրությամբ) և Գյումրի

համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի մարտի 15-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Սահմանել խնամակալություն՝ Արմենուհի Սամվելի Գրիգորյանին (նույնականացման քարտ՝ 006283493) նշանակել խնամակալ թիվ ՇԴ/0429/02/22 վճռով անգործունակ ճանաչված իր որդու՝ 22.10.2003 թվականին ծնված Գոռ Գարիկի Գրիգորյանի (նույնականացման քարտ՝ 013079181) նկատմամբ:
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմենուհի Սամվելի Գրիգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

15.03.2023

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«16» Մարտի 2023 թվականի N 653-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱԹԵՆԻԿ ԳՐԻԳՈՐԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԻՐ ԱՄՈՒՍՆՈՒ՝ ԼԵՎՈՆ ՌՈՒԲԵՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի փետրվարի 10-ին՝ Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի՝ 29.12.1960 թվականին ծնված Սաթենիկ Գրիգորի Մկրտչյանը (անձնագիր՝ AV0374018, տրված՝ 12.08.2022 թվականին, 064-ի կողմից) խնդրելով իրեն նշանակել պատրոն (օգնական) իր ամուսնու՝ 20.08.1952 թվականին ծնված Լևոն Ռուբենի Մկրտչյանի (անձնագիր՝ AU0551988, տրված՝ 16.12.2021 թվականին, 064-ի կողմից) նկատմամբ:

Լևոն Ռուբենի Մկրտչյանը առաջին խմբի հաշմանդամ է (հիմք՝ տեղեկանք N 1 327881, տրված՝ ԲՍՓՀ-ի կողմից):

Լևոն Ռուբենի Մկրտչյանը համաձայն է, որպեսզի իր կինը՝ Սաթենիկ Գրիգորի Մկրտչյանը նշանակվի պատրոն (օգնական) իր նկատմամբ:

Սաթենիկ Գրիգորի Մկրտչյանի ամուսինը՝ Լևոն Ռուբենի Մկրտչյանը ունի իր օգնության և հոգատարության կարիքը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով Սաթենիկ Գրիգորի Մկրտչյանի 2023 թվականի փետրվարի 10-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 2011 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի մարտի 15-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Սահմանել պատրոնաժ՝ Լևոն Ռուբենի Մկրտչյանի (անձնագիր՝ AU0551988) նկատմամբ և պատրոն (օգնական) նշանակել նրա կնոջը՝ Սաթենիկ Գրիգորի Մկրտչյանին (անձնագիր՝ AV0374018):
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում Սաթենիկ Գրիգորի Մկրտչյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

15.03.2023

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» հունիսի 2023 թվականի N 652-Ա

### ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԱՀԻՏ ՆԻԿՈԼԱՅԻ ՋՆԴՈՅԱՆԻՆ (ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ) ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ.ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 35 ՇԵՆՔ 14 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԹՈՌԱՆ՝ ԱՆԱՀԻՏ ԳՈՒՐԳԵՆԻ ՋՆԴՈՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի փետրվարի 10-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Անահիտ Նիկոլայի Ջնդոյանը (լիազորված անձ) (հիմք՝ լիազորագիր 38 ԱԱ 3695174, տրված՝ ՀՀ «Շիրակի մարզ» նոտարական տարածքի նոտար՝ Հ.Ֆենդյանի կողմից, գրանցված է գրանցամատյանում թիվ 9520) (անձնագիր՝ AV0621596, տրված՝ 01.02.2023 թվականին 016-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս թոռան՝ 11.10.2006 թվականին ծնված Անահիտ Գուրգենի Ջնդոյանի (ծննդյան վկայական՝ I-СП № 670798) Գյումրի քաղաքի Մ.Ավետիսյան փողոց 35 շենք 14 բնակարանի մասնաբաժինը:

Երեխայի հայրը՝ Գուրգեն Ներսեսի Ջնդոյանը մահացել է 2020 թվականի մարտի 4-ին (հիմք՝ մահվան վկայական I-ՍՊ No. 891235):

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատեր է հանդիսանում նաև անչափահաս՝ Անահիտ Գուրգենի Ջնդոյանը (հիմք՝ 26.08.2022 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 26082022-08-0030):

Անչափահաս՝ Անահիտ Գուրգենի Ջնդոյանը իր մոր՝ Օլեսյա Ալեքսանդրի Ջնդոյանի հետ հաշվառված և բնակվում է Ռուսաստանի Դաշնության Իրկուտսկի մարզի Իրկուտսկ քաղաքի միկրոշրջան Բերեզովիյ 108 շենք 21 բնակարան հասցեում, նրանք տվել են իրենց համաձայնությունը բնակարանի մասնաբաժինը վաճառելու համար:

Նիստին ներկա գտնվող Անահիտ Նիկոլայի Ջնդոյանը հայտնեց, որ իր անչափահաս թոռը՝ Անահիտ Գուրգենի Ջնդոյանը ժառանգ է հանդիսանում ՀՀ մարզ Շիրակ համայնք Արթիկ գյուղ Փանիկ 0.15687հա հողամասի 1/8-րդ, ՀՀ մարզ Շիրակ համայնք Արթիկ գյուղ Փանիկ 1.11467հա վարելահողի 1/8-րդ և ՀՀ մարզ Շիրակ համայնք Արթիկ գյուղ Փանիկ 0.10109հա վարելահողի 1/8-րդ մասերի (հիմք՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր, տրված՝ 07.02.2023 թվականին ՀՀ «Շիրակի մարզ» նոտարական տարածքի նոտար՝ Ռ.Մուկուչյանի կողմից գրանցված է գրանցամատյանում թիվ 730 ժառանգական գործ թիվ 704):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով և հիմք ընդունելով քաղաքացի Անահիտ

Նիկոլայի Ջնդոյանի (լիազորված անձ) 2023 թվականի փետրվարի 10-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 2043 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի մարտի 15-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Համաձայնություն տալ Անահիտ Նիկոլայի Ջնդոյանին (լիազորված անձ) (անձնագիր՝ AV0621596) վաճառելու իր անչափահաս թոռան՝ 11.10.2006 թվականին ծնված Անահիտ Գուրգենի Ջնդոյանի (ծննդյան վկայական՝ I-СП № 670798) Գյումրի քաղաքի Մ.Ավետիսյան փողոց 35 շենք 14 բնակարանի մասնաբաժինը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անահիտ Նիկոլայի Ջնդոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

16.03.2023

X

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

<< 16 >> մարտի 2023 թվականի N 651-Ա

## ԱՐԹՈՒՐ ՊԱՊՈՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԳՅՈՒՄՐՈՒ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ, 24-րդ կետերով, Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի մարտի 15-ի N 40-Ա որոշումը, Արթուր Պապոյի Հովհաննիսյանի 2023 թվականի փետրվարի 27-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

**1.** Արթուր Պապոյի Հովհաննիսյանին ( ծնված՝ 1990 թվականի մարտի 11-ին, անձնագիր՝ AP0637810, տրված՝ 2016 թվականի նոյեմբերի 29-ին, ՀՀ ոստիկանության 016-ի կողմից, հաշվառման հասցե՝ քաղաք Գյումրի, Տիմիրյազևի տուն 9/2, հանրային ծառայությունների համարանիշ՝ 2103900278) 2023 թվականի մարտի 17-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Գյումրու բնակարանների սպասարկում >> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր :

**2.** Աշխատավարձը սահմանել համաձայն պաշտոնային դրույքաչափի:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Պապոյի Հովհաննիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

16.03.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


# ՈՐՈՇՈՒՄ

«16» մարտի 2023 թվականի N 650 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 1601-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԹՈՒՐ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ մասերի, 60-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 169-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 16-րդ կետի,19-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի N 1601-Ն որոշման պահանջները և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 12-ի N 2200-Ա որոշման 1-ին կետի դրույթները՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 13-ի «Աղետի գոտու բնակավայրերի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը երկրաշարժից հետո տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինություններից ազատելու կարգը հաստատելու մասին» N 1601-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված համայնքի ղեկավարի գործառույթների իրականացումը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Արթուր Պապիկյանին:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված գործառույթներն իրականացնել Որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Պապիկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

16.03.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թվական

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

<< 16 >> Մարտի 2023 թվականի N 699-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԳՅՈՒՄՐՈՒ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՀՈՎԻԿ ԱՇՈՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 109–րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հովիկ Աշոտի Հակոբյանի 2023 թվականի փետրվարի 27-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Գյումրու բնակարանների սպասարկում >> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հովիկ Աշոտի Հակոբյանին ազատել զբաղեցրած պաշտոնից 2023 թվականի մարտի 17-ից՝ լուծելով նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովիկ Աշոտի Հակոբյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

16.03.2023

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«16» Յունիսի 2023 թվականի №648Ա

**ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 242Ա ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Հարություն Սիմոնյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված № 4199 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

Ժառանգության իրավունքով քաղաքացի Հարություն Սիմոնյանին պատկանող Գյումրի ք., Ղորղանյան փողոց, 242ա հասցեագրությամբ բնակելի տունը վերահասցեավորել՝

**ԳՅՈՒՄՐԻ Ք., Ն. ՂՈՐՂԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, 242/1:**

Действительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» մարտի 2023 **թվականի** N 647-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՈԼԵՅԲՈԼԻ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԳԱՎԱԹԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության վոլեյբոլի տղամարդկանց 2023 թվականի մարտի 22–26-ը Երևան քաղաքում կայանալիք գավաթի առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով վոլեյբոլի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի մարտի 15-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության վոլեյբոլի տղամարդկանց գավաթի առաջնությանը մասնակցելու համար 2023 թվականի մարտի 22–26-ը քաղաք Երևան գործուղել թվով 13 (տասներեք) մարդ:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«15» մարտի 2023 **թվականի** N 646 Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԿԻ ՉԵՄՊԻՈՆ ԵՎ ՌԵԿՈՐԴԱԿԻՐ ՍԵԴՐԱԿ ԴԱԼԼԱՔՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՎԱՆԱՁՈՐՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀՈՒՇԱՄՐՑԱՇԱՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության բազմակի չեմպիոն և ռեկորդակիրր Սեդրակ Դալլաքյանի հիշատակին նվիրված աթլետիկայի ավանդական հուշամրցաշար գործուղման ծախսերի 2023 թ. մարտի 17–18–ը քաղաք Վանաձոր Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով աթլետիկայի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի մարտ 15-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության բազմակի չեմպիոն և ռեկորդակիրր Սեդրակ Դալլաքյանի հիշատակին նվիրված աթլետիկայի ավանդական հուշամրցաշար գործուղման ծախսերի 2023 թ. մարտի 17–18–ը քաղաք Վանաձոր 23 (քսաներեք) անձանց:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից, օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«15» մարտի 2023 **թվականի** N 645-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏ ԸՄԲՇԱՄԱՐՏԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության ազատ ըմբշամարտի պատանիների 2023 թվականի մարտի 21–24-ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով ըմբշամարտի ֆեդերացիայի 2023 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2023 թվականի մարտի 15-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության ազատ ըմբշամարտի պատանիների առաջնությանը մասնակցելու համար 2023 թվականի մարտի 21–24-ը քաղաք Երևան գործուղել թվով 26 (քսանվեց) անձանց:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2023 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


## ՈՐՈՇՈՒՄ

«15» մարտի 2023 **թվականի** N 644-Ա

**«ՍՏԱՌ ՌԵԿՈՐԴՍ » ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԺՈՐԺԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՈՐԵՆԱՑԻ 66 ՀԱՍՑԵՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Ստառ Ռեկորդս» ՍՊԸ-ի տնօրեն Ժորժիկ Ներսիսյանի (ՀՎՀՀ՝ 05556301, գրանցման ամսաթիվը՝ 07.11.2022 թ.) 2023 թվականի մարտի 9-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մարտի 9-ին 3876 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել «Ստառ Ռեկորդս» ՍՊԸ-ի տնօրեն Ժորժիկ Ներսիսյանին Գյումրի քաղաքի Խորենացի 66 հասցեում իրականացնել ոգելից խմիչքների վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ստառ Ռեկորդս» ՍՊԸ-ի տնօրեն Ժորժիկ Ներսիսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

14.03.2023

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023թ. ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» մարտի 2023 **թվականի** N 643-Ա

**«ՍՏԱՌ ՌԵԿՈՐԴՍ » ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԺՈՐԺԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՈՐԵՆԱՑԻ 66 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Ստառ Ռեկորդս» ՍՊԸ-ի տնօրեն Ժորժիկ Ներսիսյանի (ՀՎՀՀ՝ 05556301, գրանցման ամսաթիվը՝ 07.11.2022 թ.) 2023 թվականի մարտի 9-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մարտի 9-ին 3878 թվագրմամբ)՝

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. Թույլատրել «Ստառ Ռեկորդս» ՍՊԸ-ի տնօրեն Ժորժիկ Ներսիսյանին Գյումրի քաղաքի Խորենացի 66 հասցեում իրականացնել հանրային սննդի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի սեպտեմբերի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ստառ Ռեկորդս» ՍՊԸ-ի տնօրեն Ժորժիկ Ներսիսյանին պատշաճ իրազեկման հաջորդող օրվանից:

15.03.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«15» մարտի 2023 **թվականի** N 642-Ա

**«ԳՐԱՆԴ ԴԻԼԻՆԳ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ԶԱՔԱՐ ԱԼԹՈՒՆՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ 116/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու «09» դեկտեմբերի 2022 թվականի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Գրանդ Դիլինգ» ՍՊԸ-ի տնօրեն Զաքար Ալթունյանի (ՀՎՀՀ՝ 02259848, գրանցման ամսաթիվը՝ 24.06.2014 թ.) 2023 թվականի մարտի 3-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2023 թվականի մարտի 3-ին 3594-2023 թվագրմամբ)՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել «Գրանդ Դիլինգ» ՍՊԸ-ի տնօրեն Զաքար Ալթունյանին Գյումրի քաղաքի Տերյան 116/3 հասցեում իրականացնել ծխախոտի արտադրանքի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2023 թվականի հունիսի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Գրանդ Դիլինգ» ՍՊԸ-ի տնօրեն Զաքար Ալթունյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

15.03.2023

X

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«15» մայիսի 2023 **թվականի** N 641 Ա

### 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ ՏՐՎԱԾ N94/21 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Վաչագան Թորոսի Ազարյանին Գյումրի քաղաքի Սպանդարյան փողոց №26/7; №32/1 և №32/2 հասցեներում պարսպի կառուցման համար 2021 թվականի հոկտեմբերի 8-ին տրվել է N94/21 շինարարության թույլտվությունը: Ըստ շինարարության թույլտվության շինարարության տևողությունը սահմանվել է 10/տաս/ ամիս:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 5/հինգ/ ամսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2021 թվականի հոկտեմբերի 8-ին տրված N94/21 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 5/հինգ/ ամսով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

**2023թ. ք.Գյումրի** Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«15» Նոյեմբերի 2023 **թվականի** N 640-Ա

## 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-ԻՆ ՏՐՎԱԾ N14/22 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Գոհար Սերգոյի Թադևոսյանին Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտա №1/8; №1/10 և №1/11 հասցեներում առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցման համար 2022 թվականի մայիսի 10-ին տրվել է N14/22 շինարարության թույլտվությունը: Ըստ շինարարության թույլտվության շինարարության տևողությունը սահմանվել է 9.1/ինը ամբողջ մեկ/ ամիս:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 8/ութ/ ամսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2022 թվականի մայիսի 10-ին տրված N14/22 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 8/ութ/ ամսով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

2023թ. ք.Գյումրի

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

«15» Մարտի 2023 **թվականի** N 639-Ա

## 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 16-ԻՆ ՏՐՎԱԾ N18/22 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կառուցապատող «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ին Գյումրի քաղաքի Շիրակացի փողոց №64 հասցեում սառնարանային կառույցի վերակառուցման համար 2022 թվականի մայիսի 16-ին տրվել է N18/22 շինարարության թույլտվությունը: Ըստ շինարարության թույլտվության շինարարության տևողությունը սահմանվել է 1/մեկ/ ամիս:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 24/քսանչորս/ օրով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2022 թվականի մայիսի 16-ին տրված N18/22 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 24/քսանչորս/ օրով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

15.03.2023

2023թ. ք.Գյումրի

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


# ՈՐՈՇՈՒՄ

«15» մարտի 2023 **թվականի** N 638-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՇԻՐԱԿԱՑՈՒ 8-ՐԴ Գ/Ա ԹԱՂԱՄԱՍ N 87 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Շիրակացու 8-րդ գ/ա թաղամաս N 87 հասցեի հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Հասմիկ Իգիթի Մելոյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 06082019-08-0009 վկայական):

Քաղաքացի Հասմիկ Իգիթի Մելոյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Շիրակացու 8-րդ գ/ա թաղամաս N 87 հասցեի 400,0 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակությունից բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետի և հիմք ընդունելով քաղաքացի Հասմիկ Իգիթի Մելոյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի փետրվարի 13-ին N 2138 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Շիրակացու 8-րդ գ/ա թաղամաս N 87 հասցեի 400,0 (չորս հարյուր) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատում գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Հասմիկ Իգիթի Մելոյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

15.03.2023

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

«15» «մարտի» 2023 թվական N 637-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի N 551 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Ռիմա Բենիամինի Կոշտոյանը (Նույնականացման քարտ 005316906, տրված՝ 29.08.2014 թվականին, 034 կողմից) Հայաստանի Հանրապետության Գյումրու քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 30-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» N 630 որոշման մեջ փոփոխություն կատարելու խնդրանքով:

Որոշման մեջ տեղի է ունեցել վրիպակ՝ մասնավորապես որոշման, որոշում եմ մասի 1211–րդ կետի 3-րդ ենթակետում՝ «Էլոյան Նվարդ Առմենակի» անվանման մեջ հայրանունը՝ «Արմենակ»–ի փոխարեն գրվել է «Առմենակ» (հիմք՝ ամուսնության վկայական N 066758, տրված՝ 01.06.1960 թ., ՀՀ Շիրակի մարզի Մայիսյանի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի, 1-ին մասի, 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Ռիմա Բենիամինի Կոշտոյանի 2023 թվականի մարտի 13-ի դիմումը՝ (Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ N 4122 թվագրությամբ)՝ **որոշում եմ.**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 30-ի «Բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ N 630 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1. Որոշման 1211–րդ կետի 3–րդ ենթակետում՝ «Էլոյան Նվարդ Առմենակի» անվանման մեջ՝ «Առմենակ» բառը փոխարինել «Արմենակ» բառով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Ռիմա Բենիամինի Կոշտոյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-0
Էլ. փոստ gyumri@gyumri.am

## ՈՐՈՇՈՒՄ

«15» մարտի 2023 **թվականի** N 636-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՊՈՂՈՏԱ N 44 ՀԱՍՑԵԻ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՍՐԱՀԻ ՁԵՂՆԱՀԱՐԿԻ, 2-ՐԴ ՀԱՐԿԻ 13,43 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտա N 44 հասցեի առևտրի և սպասարկման սրահը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացիներ Բարսեղ Արշակի Քոչարյանին և Նունե Վանյայի Քոչարյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 2436952 վկայական):

Քաղաքացի Բարսեղ Արշակի Քոչարյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն և Նունե Վանյայի Քոչարյանին պատկանող Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտա N 44 հասցեի առևտրի և սպասարկման սրահի 2-րդ հարկի 13,43 (տասներեք ամբողջ քառասուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքի և 99,01 (իննսունինը ամբողջ մեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով ձեղնահարկի նպատակային նշանակությունները բնակելիի,իսկ գործառնական նշանակությունը,որպես բնակելի տուն փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացի Բարսեղ Արշակի Քոչարյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի փետրվարի 23-ին N 2897 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Հաղթանակի պողոտա N 44 հասցեի առևտրի և սպասարկման սրահի 2-րդ հարկի 13,43 (տասներեք ամբողջ քառասուներեք հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով տարածքի և 99,01 (իննսունինը ամբողջ մեկ հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով ձեղնահարկի նպատակային նշանակությունները բնակելիի, իսկ գործառնական նշանակությունը,որպես բնակելի տուն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Բարսեղ Արշակի Քոչարյանին և Նունե Վանյայի Քոչարյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

15.03.2023

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«15» Մարտի 2023 **թվականի** N 635-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ 13-ՐԴ ՓՈՂՈՑ N 8/5 ՀԱՍՑԵԻ ԿԻՍԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՈՒ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Անի թաղամաս 13-րդ փողոց 8/5 հասցեի կիսակառույցը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի Էդգար Մարատի Մկրտչյանին (հիմք անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 18082020-08-0019 վկայական):

Քաղաքացի Էդգար Մարատի Մկրտչյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին սեփականության իրավունքով իրեն պատկանող Գյումրի քաղաքի Անի թաղամաս 13-րդ փողոց 8/5 հասցեի 675,32 (վեց հարյուր յոթանասունհինգ ամբողջ երեսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով կիսակառույցի նպատակային նշանակությունը արտադրականից բնակելիի, գործառական նշանակությունը՝ որպես բնակելի տուն փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով քաղաքացի Էդգար Մարատի Մկրտչյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի նոյեմբերի 22-ին N 22039 թվագրմամբ).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Փոփոխել Գյումրի քաղաքի Անի թաղամաս 13-րդ փողոց 8/5 հասցեի 675,32 (վեց հարյուր յոթանասունհինգ ամբողջ երեսուներկու հարյուրերրորդական) քառակուսի մետր մակերեսով կիսակառույցի նպատակային նշանակությունը արտադրականից բնակելիի, գործառական նշանակությունը՝ որպես բնակելի տուն:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Էդգար Մարատի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
3. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

15.03.2023

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

**2023թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

ՈՐՈՇՈՒՄ

«15» մարտի 2023 թվականի N 639-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Ե.ԼԱԼԱՅԱՆ ՓՈՂՈՑ N68/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 9,94 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԱՐԻՍՊԸ, 9,94 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՔԱՂԱՔԱՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԼՈՒՇՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Ե.Լալայան փողոց N68/1հասցեում գտնվող 9,94 (ինը ամբողջ իննսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը և պարիսպը հանդիսանում է համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N05122022-08-0042վկայական):

Նկատի ունենալով,որ հողամասը և պարիսպը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի և հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 26-Ա որոշումը և քաղաքացի Հ.Խլուշյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2022 թվականի մարտի15-ի N4609 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Գյումրի քաղաքի Լալայան փողոց N68/1 հասցեում գտնվող 9,94(ինը ամբողջ ինսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարիսպը 58716 հիսունութ հազար յոթ հարյուր տասնվեց)ՀՀ դրամ ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Հովհաննես Խլուշյանին
2. Գյումրի քաղաքի Լալայան փողոց N68/1 հասցեում գտնվող9,94(ինը ամբողջ ինսունչորս հարյուրերորդական ) քառակուսի մետր մակերեսով հողամասը կադաստրային գնի չափով, որը օտարման պահին կազմում է 4442 (չորս հազար չորս հարյուր քառասուն երկու) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 44154 (քառասունչորս հազար հարյուր հիսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Հովհաննես Խլուշյանին
3. Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Հովհաննես Խլուշյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Հովհաննես Խլուշյանի միջոցների հաշվին:

**Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ք.Գյումրի

**2023 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

ՈՐՈՇՈՒՄ

«15» Մարտի 2023 թվականի N 633-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Մ.ԹԵՏՉԵՐԻ ՓՈՂՈՑ N41/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 119,81 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ (ԱՐՏԱՔԻՆ) 91,28 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ (ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻՆ, 119,81ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԹԱՄԱՐԱ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Մ.Թետչերի փողոց N41/2 հասցեում գտնվող 119,81(մեկ հարյուր տասնինը ամբողջ ութանասունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր կառուցապատ մակերեսով հողամասը և բնակելի շինությունը հանդիսանում են համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N20102022-08-0003 վկայական):

Նկատի ունենալով, որ շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի, հիմք ընդունելով Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի N 26-Ա որոշումը և քաղաքացի Թամարա Մովսիսյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2021 թվականի օգոստոսի 08-ին N14629 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Մ.Թետչերի փողոց N41/2 հասցեում գտնվող 119,81 (մեկ հարյուր տասնինը ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին 91,28( իննսունմեկ ամբողջ քսանութ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելին, 707718(յոթ հարյուր յոթ հազար յոթ հարյուր տասնութ) Հայաստանի Հանրապետության դրամ, ) արժեքով ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Թամարա Մովսիսյանին
2. Գյումրի քաղաքի Մ.Թետչերի փողոց N41/2 հասցեում գտնվող 119,81 (մեկ հարյուր տասնինը ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, կադաստրային գնի չափով, որը օտարման պահին կազմում է 4442(չորս հազար չորս հարյուր քառասուներկու) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 532196 (հինգ հարյուր երեսուներկու հազար հարյուր իննսունվեց) Հայաստանի Հանրապետության դրամ, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացի Թամարա Մովսիսյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացի Թ.Մովսիսյանը պարտավոր է 60 օրվա ընթացքում կատարել վճարումները:
4. Առքուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացի Թ.Մովսիսյանի միջոցների հաշվին:

15.03.2023

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2023 թ.

ք.Գյումրի